



«ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայր

ՀՀ Արարատի մարզ, Վեդի համայնք, Եղեգնավան բնակավայր, Արարատյան 21, Հեռ.093565566, s.g hazaryan@mail.ru

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Միմիդյանին

21.02.2023թ.

Հարգելի պարոն նախարար

«Սարգիս և պապ» ՍՊԸ ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի ավազի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 22.01.2015թ.-ի ՌՇԱԹ-29/521 ընդերքօգտագործման թույլտվության:

Տեղամասերի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող անօրգանական փոշու մշտադիտարկում,
2. արտադրական հրապարակի տարածքում նավթամթերքների արտահոսքերի մշտադիտարկում,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական գնման եղանակով:


Ստորև ներկայացնում եմ 2022 թվականի ընթացքում Եղեգնավանի ավազի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Սարգիս և պապ» ՍՊԸ

ունօրեն՝



Ս. Ղազարյան



**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԱՍՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Բացահանք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20-70%)	Նմուշարկում, ավտոմատ չափում	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.053մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Բացահանքի տարածք	Նավթամթերքներ	Դիտարկում, նմուշարկում	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	Նավթամթերքների արտահոսքի հետքեր չի դիտարկվել
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Հանքավայրի տարածք	ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ	Դիտարկում դաշտային պայմաններում	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	Բացահանքի և ենթակառուցվածքների հարակից տարածքում դիտարկվել օշինդր, կապար,

¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՄԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

					լերդախոտ, սարսագան, օշաններ: ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ տեսակներ չեն դիտարկվել: Խոշոր կենդա- նիների որջեր, բնադրավայրեր չեն դիտարկվել :
Աղմուկ	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպոր- տային սարքավորում- ների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հանքավայրի տեղադիրքը. Եղեգնավանի ավազի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերը վարչական առումով գտնվում են ՀՀ Արարատի մարզում, համանուն գյուղից համապատասխանաբար 2.0 և 2.2 կմ հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախափնյա ողողահունային մասում:

Երկրաբանական կառուցվածքը. Եղեգնավանի հանքավայրի տեղամասերը գենետիկորեն կապված են Արաքս գետի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ և հանդիսանում են գետաողողատային տիպի հանքավայր:

Տեղամասերի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները և այլուվիալ ավազային նստվածքները, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի վերին չորրորդականի կավային առաջացումները:

Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները հանքավայրի շրջանում ունեն սահմանափակ հզորություն և տարածում, նշվում են գետի ձախափնյա մասի վերինային դարավանդի մասերում, իսկ հետախուզման սահմաններում լիովին բացակայում են: Ներկայացված են դրանք մանրաբեկորային նյութով՝ թույլ ցեմենտացված կավավազային խառնուրդով:

Այլուվիալ առաջացումները ներկայացնում են ավազների ժամանակակից ողողահունային և հունային նստվածքներ, որոնք բնական վիճակում, կախված Արաքս գետի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններից, մասնակի փոխում են իրենց դիրքը՝ տեղաշարժելով դրանց լվացման կամ լրացուցիչ կուտակման միջոցով տարեկան կամ բազմամյա ցիկլում, հիմնականում պահպանելով կուտակման նախնական դիրքը:

Օգտակար հանածոյի ավազակուտակները բնութագրվում են համեմատաբար համասեռ ներքին կառուցվածքով, նրանցում կոպճի կամ կավային նյութի առանձին շերտեր չեն հանդիպում:

Օգտակար հաստվածքում ավազի միջին պարունակությունը 90.5% է: Ավազը տարակազմ-հատիկային է և բաղկացած է քվարցի, դաշտային սպաթի և մուգ գույնի միներալների՝ դիոպսիտ, հիպերստեն, քլորիտ ու տարբեր ապարների հատիկներից:

Սղկվածքների ծանր ֆրակցիայում (ավազների ընդհանուր զանգվածում չնչին քանակությամբ) հանդիպում են պիրիտի, խալկոպիրիտի բյուրեղներ, տիտանի և երկաթի օքսիդներ և հիդրօքսիդներ: Ավազի հատիկները ըստ ձևի անկյունավոր են, որոնց մակերևույթը թույլ հղկված է: Ըստ հատիկների չափերի ավազները դասվում են Տմիջին խոշորության՝ ավազների խմբին:

Կոպձի պարունակությունը ավազներում տատանվում է 9.0-ից 10.4%, կազմելով միջինը օգտակար հաստվածքում 9.5%: Կոպիձի նյութը բավական լավ հղկված է, ունի կլորավուն և իզոմետրիկ ձևեր, որոնք ունեն 5-70մմ չափսեր:

Կավային նյութը ավազում գտնվում է հիմնական զանգվածում ցրված Կփոշեացված՝ վիճակում: Փոշենման և կավային մասնիկների պարունակությունը տատանվում է 1.7-ից մինչև 2.6% սահմաններում, կազմելով միջինը հետախուզման սահմաններում 2.20%: Կավի առկայությունը կոշտերում հանդիպում է բոլոր նմուշներում և դրանց պարունակությունը ավազում չի գերազանցում 0.33%:

Հանքավայրի տեղամասերից տարիների ավազահանման փորձը ցույց է տվել, որը գարնանային վարարումների ընթացքում, արդյունահանված ծավալները վերականգնվում են, հիմնականում պահպանելով կուտակման նախկին ձևը:

Եղեգնավանի հանքավայրի երկու տեղամասերի ավազի որակական գնահատականը տրվել է համաձայն ՏԱվազ շինարարական աշխատանքների համար՝ 8736-95 ՀՍ ԳՈՍ-ի տեխնիկական պահանջների:

Հանքավայրի ավազների քիմիական կազմը ներկայացված է սորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

	Պարունակությունները, %									
	SiO ₂	TiO ₂	Fe ₂ O ₃	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃	Na ₂ O	K ₂ O	ԿՇԺ
1-ին տեղամաս										
Միջինը	57.31	0.35	9.35	13.00	6.95	4.75	<0.10	3.56	2.17	2.04
2-րդ տեղամաս										
Միջինը	56.83	0.36	9.14	13.60	7.47	4.94	<0.10	3.23	2.21	1.75

Օգտակար հանածոյի լաբորատոր փորձարկումներով որոշված նմուշների ֆիզիկամեխանիկական ցուցանիշների միջին տվյալները բերվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Մեծությունը	
		1-ին տեղ.	2-րդ տեղ.
1.	Ավազի պարունակությունը,%	90.7	90.4
2.	Կոպճի պարունակությունը ավազում, %	9.3	9.6
3.	Ավազի ծավալային զանգվածը բնամասում, կգ/մ ³	1875	1876
4.	Ավազի ծավալալիքային զանգվածը, կգ/մ ³	1352	1357
5.	Փխրեցման գործակիցը	1.14	1.14

Հաստատված պաշարները. Հանքավայրի պաշարները C₁ կարգով հաստատվել են ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից 2014 թվականի մարտի 20-ին թիվ N 365 որոշմամբ, 2014 թվականի փետրվարի 26-ի դրությամբ, հետևյալ քանակներով:

Աղյուսակ 3.

Տեղամասերը	Ստատիկ պաշար, հազ.մ ³	Վերականգնվող պաշարներ	
		ընդհանուր, հազ.մ ³ տարի	տեսակարար, հազ.մ ³ հա · տարի
1-ին տեղամաս	86.8	86.8	40.1
2-րդ տեղամաս	54.3	54.3	40.2
Ընդամենը	141.1	141.1	-

Հանքավայրի շահագործման լեռնատեխնիկական պայմանները.

Հանքավայրի լեռնատեխնիկական բարենպաստ պայմանները հնարավորություն են տալիս հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով:

Կատարվել են հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- 1-ին բացահանքի բացահանքային դաշտի հարավ-արևելյան կողմից,
- 2-րդ բացահանքում բացահանքի հարավային մասից կտրող խրամի անցում,
- դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում 1-ին բացահանքում⁸ բացահանքի

հարավ-արևելյան (336մ3), 2-րդ բացահանքում^ա բացահանքի հարավ-արևմտյան մասերից (225մ3),

- օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում:

Շահագործական բացահանքերը վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը.

	1-ին տեղամաս	2 տեղամաս
Ամենամեծ երկարությունը, մ	383.0	275.0
Ամենամեծ լայնությունը, մ	83.0	79.0
Մշակման խորությունը, մ	4.01	4.02
Կորզվող պաշարները, մ ³	885 700	433 800

Բացահանքի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներն են.

- էքսկավատոր - ЭО – 5111EXL,
- բուլդոզեր - ДЗ – 170.1,
- ավտոինքնաթափ - КрА3 – 256Б:

Բացահանքի աշխատողների թիվը 8 մարդ:

Բացահանքում խմելու ջրով բանվորներին ապահովում են անհատական տափաշշերտի: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում ջրցան լվացող ավտոմեքենայով:

Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունվում է 176 օր, աշխատանքային հերթափոխի քանակը՝ օրվա մեջ – 1, հերթափոխի տևողությունը – 8,0 ժամ:

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

Ընդունված մշակման համակարգը ունի հետևյալ տարրերը՝

1. աստիճանների թեքության անկյունը
 - աշխատանքային – 40°;
 - ոչ աշխատանքային (մարված)-30°;
2. ընթացքաշերտի լայնությունը -8,5մ;

3. էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 18,0մ;

4. աշխատանքային հրապարակի լայնությունը – 22.0մ:

Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.

Երկրաձևաբանական տեսակետից Եղեգնավանի ավազի հանքավայրի տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:

Շրջանի կլիման չոր է, խիստ ցամաքային: Բնութագրվում է չոր, շոգ ամառով և կարճ, մեղմ ձմեռով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է մինչև +40°C (միջինը +30°C, իսկ ձմռանը՝ հունվարին իջնում է մինչև -10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200 օր:

Հանքավայրի տարածքը գտնվում է Արաքս գետի ձախափնյա ողողահունային մասում

Եղեգնավանի ավազի հանքավայրի շրջանում տիրապետում են կիսաանապատային, լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները:

Հանքավայրի տարածքի բուսածածկը ներկայացված է անապատային հալոֆիլ տեսակներով՝ *Salsola ericoides* Beib., *Salsola dendroides* Pall., *Salsola nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* մասնակցությամբ



Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:




Բնապահպանական միջոցառումների բնութագիր. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

✓ նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

✓ օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- ✓ հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում
և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- ✓ կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- ✓ արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- ✓ դիզելային շարժիչով աշխատող լեռնատրանսպորտային
սարքավորումների վրա խլացուցիչների տեղադրում,
- ✓ փոշենստեցման նպատակով բացահանքի ճանապարհների ջրում:
- ✓ կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում
դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- ✓ խախտված տարածքների ռեկուլտիվացիա,
- ✓ շրջակա միջավայրի մշտադիտարկում: Մշտադիտարկման կետերի
տեղադիրքը ներկայացված է նկար 1-ում :



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
-  Մթնոլորտային օդի մշտադիտարկում 1-ին և 2-րդ տեղամասերի բացահանքերում
 -  Արտադրական հրապարակում նավթամթերքների արտահոսքերի մշտադիտարկում
 -  Կենսաբազմազանության մշտադիտարկման տարածքներ /1-ին և 2-րդ տեղամասեր/

Նկար 1.